Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 28.06.2021թ. թիվ 2112927945 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<08>> 07 2021թ. 7-13- 10711 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Սասուն Համբարձումյանի ՄԴ/53196-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաք Աջափնյակ վարչական շրջանի Նորաշեն թաղամասի 45 շենքի 29 բնակարանի բնակիչ Սասուն Համբարձումյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 28.06.2021թ. թիվ 2112927945 որոշմանը՝ նշելով, որ վարչական պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտը սխալ է նշված, քանի որ պետք է նշված լիներ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ թիվ 2112927945 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման համաձայն, 1.3 ՝ գծանշումը բաժանում է չորս և ավելի երթևեկության գոտի ունեցող ճանապարհներին հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը (առանցքային գծեր).

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալը, եթե դա կապված չէ վազանցը թույլատրված տեղերում վազանց կատարելու կամ կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը շրջանցելու հետ, և եթե առանց հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու անհնար է շրջանցել կանգնած տրանսպորտային միջոցը կամ խոչընդոտը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 3 միավոր:

Վիճարկվող որոշման հիմքում դրված տեսանյութը փաստում է, որ <<BMW>> մակնիշի 31QQ030 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 07.06.2021թ. ժամը 18:31-ին Երևան քաղաքի Խաչատրյան-Փափազյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ մասնավորապես Փափազյան փողոցում, 1.3՝ գծանշման առկայությամբ դուրս է եկել հանդիպակաց երթևեկության գոտի, որը կապված չէ վազանցը թույլատրված տեղերում վազանց կատարելու հետ:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 18-րդ մասի հատկանիշները, հետևաբար վարչական տույժի ենթարկելու մասին որոշումն օրինական է և իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 28.06.2021թ. թիվ 2112927945 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Սասուն Համբարձումյանին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Ա.Ղափլանյան
Հեռ. 011 544 783